

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի հուլիսի 17-ի N 406-Ա հրամանի

**Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի Ա Վ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ Ա Ն  
Պ Ա Շ Տ Ո Ն Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր**

**Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն Գ Յ ՈՒ Ղ Ա Տ Ն Տ Ե Ս ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն  
Ս Ն Ն Դ Ա Մ Թ Ե Ր Ք Ի Ա Ն Վ Տ Ա Ն Գ ՈՒ Թ Յ Ա Ն Պ Ե Տ Ա Վ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Վ Ա Ջ Մ Ի  
Ս Ն Ն Դ Ա Մ Թ Ե Ր Ք Ի Ա Ն Վ Տ Ա Ն Գ ՈՒ Թ Յ Ա Ն Ե Վ ՈՐ Ա Վ Ի Հ Վ Կ Ո Ղ ՈՒ Թ Յ Ա Ն Տ Ե Ս Չ ՈՒ Թ Յ Ա Ն Տ Վ Յ Ա Ն Ն Ե Ր Ի  
Վ Ե Ր Լ ՈՒ Ծ ՈՒ Թ Յ Ա Ն Ե Վ Խ ՈՐ Հ Ր Դ Ա Տ Վ ՈՒ Թ Յ Ա Ն Բ Ա Ժ Ն Ի Գ Լ Խ Ա Վ ՈՐ Մ Ա Ս Ն Ա Գ Ե Տ Ի**

(Ծածկագիր՝ 30/1-2.3-49)

**I. Ը Ն Դ Հ Ա Ն ՈՒ Ր Դ Ր ՈՒ Յ Թ Ն Ե Ր**

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) տվյալների վերլուծության և խորհրդատվության (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետի պաշտոնն ընդգրկվում է քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբում:
2. Բաժնի գլխավոր մասնագետին «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Աշխատակազմի ղեկավարը:

**II. Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Կ Ա Ջ Մ Ա Վ Ե Ր Պ Մ Ա Ն Ե Վ Դ Ե Վ Ա Վ Ա Ր Մ Ա Ն  
Պ Ա Տ Ա Մ Խ Ա Ն Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր**

3. Բաժնի գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:
4. Բաժնի գլխավոր մասնագետն իրեն ենթակա աշխատողներ չունի:
5. Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի առաջատար մասնագետը:  
Բաժնի գլխավոր մասնագետը Բաժնի պետի, Բաժնի մյուս գլխավոր մասնագետի, Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:
6. Բաժնի գլխավոր մասնագետը՝
  - 1) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժնի ընթացիկ աշխատանքների կազմակերպմանը, ծրագրմանը, ղեկավարմանը և վերահսկմանը, օժանդակում է Բաժնի ավելի ցածր պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին, ինչպես նաև համակարգում է նրանց աշխատանքներին:
  - 2) կատարում է Բաժնի պետի հանձնարարականները:
  - 3) պատասխանատվություն է կրում օրենքների, իրավական այլ ակտերի պահանջները և իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

**III. Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Ն Ե Լ ՈՒ Լ Ի Ա Ջ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր**

7. Բաժնի գլխավոր մասնագետը, Բաժնի պետի հանձնարարությամբ, մասնակցում է Բաժնի առջև դրված գործառնություններից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:

**IV. Շ Փ ՈՒ Մ Ն Ե Ր Ե Վ Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց ՈՒ Ց Չ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր**

8. Բաժնի գլխավոր մասնագետը՝
  - 1) Աշխատակազմի ներսում Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների ղեկավարների և աշխատողների հետ շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ իր լիազորությունների շրջանակներում:
  - 2) Բաժնի պետի հանձնարարությամբ Աշխատակազմից դուրս շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ, մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ինչպես նաև հանդես է գալիս առաջարկություններով, զեկուցումներով, հաշվետվություններով և այլն:

**V. Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ի Բ Ա Ր Դ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր Ե Վ Դ Ր Ա Ն Ց  
Ս Ե Ն Դ Ս Ա Գ ՈՐ Ծ Ա Վ Ա Ն Լ ՈՒ Ծ ՈՒ Մ Ը**

9. Բաժնի գլխավոր մասնագետը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ, բացահայտում, վերլուծում և գնահատում է Բաժնի առջև դրված գործառնություններից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ:

**VI. Գ Ի Տ Ե Լ Ի Ք Ն Ե Ր Ը Ե Վ Հ Մ Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր**

10. Բաժնի գլխավոր մասնագետը՝
  - 1) ունի Գյուղատնտեսական հումքի վերամշակման և պարենամթերքների տեխնոլոգիա կամ Տնտեսագիտություն (էկոնոմիկա) և կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով կամ Անասնաբուժություն կամ Անասնաբուժական-սանիտարական փորձաքննություն կամ Քիմիա կամ Մանրէաբանություն (միկրոբիոլոգիա) կամ Բժշկական խարգելման գործ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:
  - 2) ունի ՀՀ Սահմանադրության, Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրության, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Սննդամթերքի անվտանգության մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Անասնաբուժության մասին», «Քրուսասանիտարափայի մասին», «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Իրավական ակտերի մասին», «Առևտրի և ծառայությունների մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կառավարության 2010 թվականի ղեկտնաբերի 30-ի Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Սննդամթերքի անվտանգության

պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն և 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1316-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու, 2004 թվականի հուլիսի 24-ի N 1032-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և 2002 թվականի նոյեմբերի 21-ի N 1888-Ն և N 1915-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1730-Ն, ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Անասնաբուժության, բուսասանիտարիայի ու կերի անվտանգության բնագավառներում վերահսկողություն իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող լիազոր մարմնի իրավասությունը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը վերապահելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի N 557-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի փետրվարի 9-ի N 62 ու օգոստոսի 24-ի N 512 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1731-Ն, ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը լիազորություններ վերապահելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N 1913-Ն, N 1916-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 14-ի N 576-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 13-ի N 103-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 1732-Ն որոշումների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

4) տիրապետում է անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների և ունակությունների,ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով նախատեսված գործառնություններից բխող կառավարչական հմտությունների և ունակությունների (Ցանկեր N 1-2).

5) տիրապետում է ռուսերենին (ազատ):

## VII. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Բաժնի գլխավոր մասնագետը՝

1) իրականացնում է սննդամթերքի անվտանգության բնագավառում իրականացվող պետական վերահսկողության արդյունքների, սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության գլխավոր մասնագետ-տեսուչների հաշվետվությունների ամփոփումը.

2) իրականացնում է քաղաքացիներին և տնտեսավարող սուբյեկտներին մասնագիտական խորհրդատվության տրամադրման աշխատանքները.

3) իրականացնում է սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության բնագավառում իրականացվող աշխատանքների արդյունավետ իրականացմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը.

4) իրականացնում է սննդամթերքի արտադրության բնագավառում վտանգի աղբյուրի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի ներդրման աջակցությանը և ներդրված համակարգի նկատմամբ պետական հսկողության իրականացման աշխատանքներին մասնակցությունը.

5) իրականացնում է քննարկման ներկայացված իրավական ակտերի նախագծերի և այլ գրությունների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու աշխատանքները.

6) իրականացնում է սննդամթերքից մարդկանց փոխանցվող ինֆեկցիոն հիվանդությունների, սննդային թունավորումների հայտնաբերման դեպքում առողջապահության բնագավառում պետական լիազոր ու շահագրգիռ այլ մարմիններին տեղեկացնելու վերաբերյալ աշխատանքները.

7) իրականացնում է սննդամթերքի անվտանգության բնագավառում միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության աշխատանքները.

8) իրականացնում է գերատեսչական և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման, Ծառայության այլ ստորաբաժանումների կողմից նախապատրաստված, այլ պետական մարմինների

կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ եզրակացություններ կազմելու աշխատանքներ.

9) իրականացնում է ՀՀ կառավարությունից ստացված հանձնարարականների կատարումը, կազմում դրանց կատարումից բխող պատասխան գրություններ.

10) Բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում է Բաժնի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր.

11) Բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի մշակմանը.

12) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Բաժնի պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.

13) Բաժնի պետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է առաջարկություններ՝ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու և աշխատանքային խմբեր կազմավորելու համար.

14) Բաժնի պետին, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է զեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում կատարվող աշխատանքների վիճակի մասին.

15) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի գլխավոր մասնագետն ունի Օրենքով իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

## VIII. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ

12. Բաժնի գլխավոր մասնագետին Օրենքով սահմանված կարգով շնորհվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

ՑԱՆԿ N 1

ԳԼԽԱՎՈՐ ՊԱՇՏՈՆ ԶՔԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ (ՊԱՐՏԱԴԻՐ)  
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքային պլանի մշակում
2. Արդյունքների ապահովում
3. Թիմային աշխատանք
4. Հաղորդակցություն
5. Հաշվետվությունների մշակում և ներկայացում
6. Միջանձնային հարաբերություններ
7. Մտածողության ոճեր
8. Նպատակների սահմանում
9. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծում և կառավարում
10. Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային հմտություններ

ՑԱՆԿ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ  
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ  
ՍՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ  
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Աշխատանքի, կատարողականի գնահատում և կառավարում
2. Առաջնորդման ոճեր
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Ծառայությունների մատուցում և կառավարում
6. Ծրագրերի մշակում և կառավարում
7. Ռեսուրսների բաշխում և կառավարում
8. Շահադրդում
9. Պատվիրակում
10. Սթրեսի կառավարում
11. Փոփոխությունների կառավարում
12. Քաղաքականության մշակում և իրականացում
13. Ինդիքների լուծում
14. Որոշումների կայացում
15. Բանակցությունների հմտություններ
16. Ելույթների հմտություններ
17. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
18. Որոշումների և փաստաթղթերի նախապատրաստում
19. Ֆինանսների կառավարում
20. Կոնֆլիկտների կառավարում
21. Ուսուցում գործողությունների միջոցով